

Հոկտեմբերի 7-ին «1+1» թերթի խմբագրությունը Գեղարքունիք գյուղի մի խումբ ուսուցիչների հետ այցելեց Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի սահմանամերձ փոքրիկ Շատվան համայնք, որը ևս պատերազմական այս օրերին ենթարկվեց ումբակոծությունների: Մեր խմբի նպատակն էր՝ հոգեբանական օգնություն ցուցաբերել տեղի բնակիչներին և նրանց ծանոթացնել քաղաքացիական պաշտպանության նորմերին օդային տագնապի ժամանակ: Հասնելով Շատվան՝ հանդիպեցինք մի տարեց տղամարդու, ում հետ զրուցեցինք երկրում տիրող իրավիճակի մասին: Լսեցինք նաև իր կարծիքը:

Մեր հարցին, թե արդյոք տեղեկացված է՝ ինչ պետք է անել օդային տագնապի և իրազեկումների դեպքում, նա պատասխանեց:

- Իհարկե, տեղեկացված եմ, համայնքի բնակիչներին ևս փորձել եմ իմ ուժերի ներածին չափով տեղեկացնել այդ ամենի մասին: Հորդորել եմ՝ զերծ մնալ հեռախոսազանգերի ընթացքում պատերազմական իրավիճակի վերաբերյալ քննարկումներից, ինչպես նաև չտարածել չճշտված տեղեկություններ և հավատալ միայն պաշտոնական լրահոսին:

Հանդիպեցինք նաև համայնքի այլ բնակիչների և նրանց ևս հորդորեցինք՝ զերծ մնալ ապատեղեկատվություն տարածելուց և համացանցում վիրավոր կամ անհայտ կորած զինվորների լուսանկարները տարածելուց: Եղանք նաև Մեծ Մասրիկ գյուղում, համայնքի բնակիչներին բաժանեցինք թուղցիկներ՝ «Քաղաքացիական պաշտպանություն օդային տագնապի դեպքում» թեմայով: Այցելեցինք նաև ուրիշ համայնքներ՝ Ծովինար, Արծվանիստ, Վարդենիկ և այլ, համայնքապետարաններին տվեցինք «1+1» թերթի կողմից տպագրված թուղցիկները և խնդրեցինք, որ բաժանեն համայնքի բնակիչներին:

Կարծում եմ՝ մեր այցը ստացված էր: Ծիշտ է, բնակիչները որոշ չափով իրազեկված էին, բայց մենք ևս մեկ անգամ փորձեցինք աջակցել...

**1+1 թերթի խմբագրություն**